*Վերապատուհրագունեղի տեառն տեառն Աբրահամ Հօրդ իմոյ Մխիթարայ Աստուածաբանուրեան վարդապետի որդիական պատկառանօք և համբուրմամբ սուրբ աջոյդ, ողջոյն։*

*. . . աղայ Մանուէլն Շէհրիմանեան.. խնդրեաց զոմանս գրեանս, որ է եղբայր աղայ Աստուածատրին, որ եկեալ է աստ ընդ հրեշտակի աղուանից իշխանին, որ է իբր խորհրդական և առաջնորդ նորին, որդին ևս ընդ իւր է՝ աղայ սահրատ կոչեցեալ։ Ունէր զդիտաւորութիւն ուղարկել զնա այդր առ եղբայրն իւր, բայց տակաւին անորոշ է վասն ոմանց նկատմանց ի կողմանէ տաճկին, թերևս զհրաման առեալ ուղարկիցէ։ Եասախ-ճիով չրջի հետիոտս. բնաւն չորս հինկ հայ կան ընդ հրեշտակին. մինն իբրև թարգման, միւսն իբրև խորհրդական, և այլք իբրև ստորագրեալք նոցին. Դ կամ Դ անգամ աղայ Մանուէլն պուլուչմիշ եղաւ մատանւոյն, կարի ծանր թուեցաւ տաճկաց վասն հայոց այսոցիկ. և ի մէջ նամէին զմեծամեծս բարբառեալ էր տիրոջն չօշ քաղաքի. կայսր անուանեալ է զինքն. ճշմարիտ թուրք զինքն անուանեալ է. ի բաց կալ ստիպէ ի թա-գաւորութենէն յայնմանէ և զառեցեալն թողուլ։ Ասացեալ է թէ տէր յայժմ ինձ կամե-ցեալ է թագաւորել այնմ բովանդակ աշխարհի, որովհետև առի զթաղթն և ունի կենդանի առ ինքն զչահն. և զայլս բազումս ասեն։ Վասն որոց սոքա խորհուրդ արարեալք՝ կար-դացողքն վճիռ ետուն պատերազմիլ ընդ նմա. յաղագս որոյ սկսան զզօրս առաքել օր ըստ օրէ, սկսեալ յօրէ բարեկենդանի կիրակէին։ Անատօլու զմեծ նեղութիւն ունին ստորագրեալքն։...*

*. . Կարապետ Վ. Գաղատիու առաջնորդն եղև կաթուղիկոս յառաջին կիրակի աղուհացից ի յերկոտասան եպիսկոպոսաց յեկեղեցին Աստուածածնայ, յերեք ժամու գի-շերուն սկսան, մինչև էանց կէս գիշեր։ Հրամայեցաւ ծոմարձակ լինել և գինի ըմպել, և բաց պատարագ առնել ի նոյն եկեղեցի, և այս ինն օր։ Յետ երից աւուրց զպատրիարգն արար եպիսկոպոս, և այլք եպիսկոպոսունք յայլս եկեղեցիս՝ զքահանայս, զսարկաւա-գունս, և զդպիրս յոլովս ձեռնադրեցին։ Եւ ի յիւրաքանչիւրս զնզովս արտաբերեցին ընդդէմ առիւծ[1] հայրապետին և ժողովու նորին. բայց ի ձեռնադրութեան կաթուղի-կոսութեան երկպառակէ բանն։ Նաեւ պատրիարգն յաւուր ձեռնադրութեան կաթողի-կոսին ծանուցումն արար, թէ ով որ յաւուր այսմիկ խոստովանի և հաղորդի՝ ամենից մեղաց թողութիւն առնու, թերևս գիտակ է, որպէս ի կացուցման ծայրագոյն քահա-նայապետի՝ լինի լիակատար ներողութիւն։ Նաև երկու հայ գերի ախչկունք անկեալ առ ոտս կաթուղիկոսին վասն ազատութեան՝ ծանուցումն արար ասելով. Ով որ ազատէ զսոսա և արասցէ իւր կին՝ տաց հրաման զի ի շաբաթու աղուհացիցս պսակեսցեն զնոսա։ . . .*

*Մնամ պատրաստական, Նուաստ ծառայ ամենայնի*
*Գերյարգութեան Քում*

*Գրեցաւ ի թուոյ Փրկչին 1726ին։* *Հայր Միքայէլ Վ. Սեբաստացի*
*Մարտի 23, ըստ նորոյ հաշուին.*
*գիր վեցերորդ ի Կոստանդինուպօլսոյ*

## ԼԱ.

*Բաց ի նորագոյն տեղեկութենէ մը՝ զոր կու տայ իր մասին Յովհան եպիսկոպոս՝ խորհրդաւոր հարցումներ մ'ունի այս անգամ առ Մխիթար Աբբահայր։*

---

1. Léon = առիւծ։